Վարկային հայտի բավարարման գործոններ

1. Վարկառուի/երաշխավորի կողմից ներկայացվել են անհրաժեշտ փաստաթղթերն ամբողջությամբ:
2. Վարկային հայտը և անհրաժեշտ փաստաթղթերը ներկայացնելուց հետո, հաճախորդի վարկային պատմության վերաբերյալ ԱՔՌԱ վարկային բյուրո կատարված հարցման արդյունքում Վարկային հայտի ներկայացման նախորդ 24 ամիսների ընթացքում Վարկառուն/երաշխավորը չպետք է ունենա դասակարգված պարտավորությունների (բացառությամբ մարված երաշխավորությունների) և ժամկետանց պարտավորությունների օրերի հանրագումարը չպետք է գերազանցի 45 օրը:
3. Դրական վարկային պատմության կամ վարկային պատմության բացակայության դեպքում կատարվում է հաճախորդի վարկունակության և վճարունակության գնահատում: Հաճախորդը/երաշխավորը համարվում է վարկունակ, եթե Ընդհանուր մարում/Եկամուտ առավելագույն հարաբերակցությունը 50% (վարկառուի և երաշխավորի բոլոր վարկային պարտավորություններ (բացառությամբ վարկառուի և երաշխավորի անվամբ գործող հիփոթեքային վարկերի գծով ամսական մարումներից և վարկառուի և երաշխավորի կողմից տրամադրված երաշխավորությունների գծով ամսական մարումների)/վարկառուի և երաշխավորի եկամուտ): Հիմք է ընդունվում չհարկված եկամուտը
4. Գրավադրվող ավտոմեքենան համապատասխանում է ներկայացված պահանջներին:
5. Եվ այլն:

Վարկային հայտի մերժման գործոններ

1. Վարկառուի/երաշխավորի կողմից չեն ներկայացվել վարկ ստանալու համար անհրաժեշտ բոլոր փաստաթղթերը:
2. Վարկային հայտը և անհրաժեշտ փաստաթղթերը ներկայացնելուց հետո, հաճախորդի վարկային պատմության վերաբերյալ ԱՔՌԱ վարկային բյուրո կատարված հարցման արդյունքում Վարկային հայտի ներկայացման նախորդ 24 ամիսների ընթացքում Վարկառուն/երաշխավորը ունի դասակարգված պարտավորությունների (բացառությամբ մարված երաշխավորությունների) և ժամկետանց պարտավորությունների օրերի հանրագումարը գերազանցել է 40 օրը:
3. Վարկառուի/երաշխավորի վարկունակության և վճարունակության գնահատման արդյունքում եզրակացությունը եղել է բացասական

4. Գրավադրվող ավտոմեքենան չի համապատասխանում ներկայացված պահանջներին:
5. Վարկավորման գործընթացի արդյունքում հայտնի են դարձել հաճախորդի վերաբերյալ այնպիսի տեղեկություն, որը կասկածի տակ է դնում հաճախորդի վճարունակությունը:
6. Բանկում վարկային հայտերի վերաբերյալ որոշումներ կայացնելու իրավասություն ունեցող լիազոր մարմինը չի բավարարել հաճախորդի վարկային հայտը:
7. Վարկային հայտը հաստատվել է, սակայն հաճախորդը հաստատմանը հաջորդող 10 օրերի ընթացքում չի ներկայացել կամ չի ներկայացրել անհրաժեշտ փաստաթղթերը:
8. Եվ այլն:

(+374)10 59 23 23
info@araratbank.am | araratbank.am